Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՊԱՅՔԱՐԻ ՖՐՈՆՏՈՒՄ

ՊԻԵՍ Յ ԳՈՐԾ.

ՊԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ © 1933

Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՊԱՅՔԱՐԻ ՖՐՈՆՏՈՒՄ

ՊԻԵՍ 3 ԳՈՐԾ.

A I / 8500

★

ՊԵՏՀՐԱՏ ● 1933 ● ԵՐԵՎԱՆ

ԳՈՐԾՈՂԱՆՁԻՆՔ

Համբո	կոլխոզնիկ.—նախկին կուլակ
սրո . . . . . »	»—ծածկված դաշնակ
Ի Հայրո . . . . . »	»—ծածկված դաշնակ
Մուսեղ	գուլղխորհրդի նախագահ
Ղարիբ	կոլխոզի վարչ. նախագահ
Մաթեվոս	կուսքջիջի քարտուղար
Սաթիկ	կոմսոմոլի բջիջի քարտուղար
Կոլխոզնիկ	
Տրակտորիստ	

Մասնակցում են նաև գ. խ.-ի անդամներ, կոլխոզնիկներ, կուսակցականներ և կոմյերիտականներ:

Անցքը տեղի ունենում գյուղում, դարնանացանի խնդիրների հետ կապված:

Ծանոթություն.—*Պիեսը կարելի է ներկայացնել, թե բամբակացանում և թե հացահատիկային շրջանների գյուղական բեմերում, բեմադրության ժամանակ փոխելով «բամբակ»-ը «ցորենով» և հակառակը:*

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է գյուղխորհրդի ընդարձակ դրասենյակը: Դրված են նստարաններ, յերկու սեղան: Պատերին փակցված են Լենինի, Ստալինի, Կալինինի և Վորոշիլովի մեծադիր նկարներն՝ առանց շրջանակների: Պատերին փակցրված են նաև մի շարք պլակատներ:

Գարնան սկիզբն է:

Յերեկո յե:

Կոլխոզի ընդհանուր ժողով է:

ՏԵՍԻԼ Ա.

Մուշեղ (մենակ)

ՄՈՒՇԵՂ — (Լամպի ապակին մաքրելով և վառելով) Ե՛, դժվար է, չա՜տ դժվար: Գյուղն ել առաջվա գյուղը չե՛: Շատ է փոխվել: Առաջ աշխատելը չատ եր հեշտ և քաղցր: Ինչպես վոր ուզում եյինք, այնպես ել անում եյինք: Քեֆներս ինչ տալիս եր, են ել անում եյինք: Կուլակի տանն ել եյինք ուտում, խմում, ունեվորի տանն ել, տերտերի տանն ել: Ո՞վ եր ասում, թե ինչո՞ւ յես այդպես անում: Իսկ հիմի՞: Հիմի կարա՞ս՝ թեկուզ հենց նրանց դռնովն անցնես կամ թե նրանց իշին չու ասես. իսկույն մատի փաթաթան կշինեն, մի յե՛քա

զուռնա կդարձնեն և գործդ կտան Ե.Վ.Հ.—ին։ «Մեր ընկերները բալշևիկյան, հեղափոխական, դասակարգային զգոնությունը կորցրել են, գյուղում կորցրել են կուլակին և չեն տեսնում ու գտնում» և այլն և այլն։ Ահա՛, թե ի՞նչ են գրում մեր բոլոր թերթերը։ Ա՛յ մարդիկ, գյուղում կուլակ չկա՛։ Բոլորին կուլակաթափ ենք արել. հենա սատկում են, չքավորից էլ բեթար են դարձել. էլ ի՞նչ եք ուզում եղ շուն չան վորդիներից։ Ե՞հ, բան չեմ հասկանում։ Ցերբ վոր այսպես էլ մարդ խոսում է՝ էլ պրծա՞վ. թեքումներն ու ոպորտունիզմը պոչիդ են կպցնում ու բաց թողնում։ Դա՞. շատ է դժվար, չա՞տ։ Ցերանի քաղաքում աշխատողներին. վոչ կուլակի խնդիր կա, վոչ գարնանացանի, վոչ մթերումների, և առհասարակ վո՛չ մի պլանի, ու ցանքի։

(Մտնում է Մաթևոսը թղթապահակը թևի տակ)։

ՏԵՍԻԼ Բ.

Մուշեղ և Մաթևոս

ՄԱԹ.—Մուշո՞, դեռ չեն հավաքվե՞լ։ Ինչո՞ւ յեն այսքան ուշանում։ Հավաքվեն, տեսնենք ինչ ենք անում։ Այսորվա ժողովի խնդիրը շատ լուրջ և խոշոր խնդիր է։ Գարնանացանը մեր կուսակցության և իշխանության համար վոչ միայն տնտեսական, այլև քաղաքական խոշոր նշանակություն ունի։

ՄՈՒՇԵՂ.— Ի հարկե։ Ամեն բան կախված է դրանից— բամբակից և հացից...

ՄԱԹ.— Առհասարակ գյուղատնտեսական ամեն տեսակի մթերքներից ու ապրանքներից։

ՄՈՒՇ.— Գլխավորապես հացից։

ՄԱԹ.— Հացի՛ց, բամբակի՛ց։ Այժմ բամբակը ևս. Միության համար խոշոր նշանակություն ունի։ Առանց բամբակի մեր տեքստիլ գործարանները չեն կարող աշխատել։ Զուր չէ, վոր մենք նրան անվանել ենք «սպիտակ վոսկի»։

ՄՈՒՇ.— Դա շատ ճիշտ է. բայց հացն էլ խոշոր նշանակություն ունի։

ՄԱԹ.—Ի՛հարկե՛, «պայքար հացի համար—պայքար սոցիալիզմի համար», ասել է ընկեր Լենինը։

ՄՈՒՇ.— Շատ անիծված բան է եղ հացը։ Հեղափոխությունն էլ է դրանից կախված, հակահեղափոխությունն էլ...

ՄԱԹ.— Ճիշտ է, Մուշ, հացը յերկու դեպքումն էլ խոշոր վճռական դեր է խաղում։ Ով ուժեղ է հացով, առհասարակ տնտեսապես, նա յել ուժեղ է քաղաքականապես։

(Իրար հետևից ներս են գալիս Դարիբը, Սաթիկը, Համբոն, Իսքոն, Հայրոն և կոլխոզցիկները)։

ԴԱՐԻԲ.— Ընկերներ, ներողություն, վոր քիչ՛ ուշացա։ Արհեստանոցումն եյի։ Նոր շինած ֆուրգոնը վերջացրինք։ Շատ գյոզալ բան է դուրս յեկել։ Ցեթե գնեյինք՝ մեզ վրա կնստեր մոտ հինգհազար ռուբլի, իսկ մեզ մոտ նա նստել է ընդամենը 300 ռուբլի։

ՄԱԹ.— Բրավո՛, բրավո՛, վարպետ Վոսկան։ Մատերը վոսկի յե, վոսկի՜...

ՂԱՐԻԲ.— Դե՛հ, ընկերնե՛ր, նստեցեք, սկսենք և վերջացնենք։

ՉԱՑՆԵՐ.— Սկսե՛նք, սկսե՛նք...

(Բոլորը նստում են, կոլխոզի հաշվապահը վերցնում է թուղթ և թանաք՝ արձանագրելու համար)։

ՂԱՐԻԲ.— Ընկերնե՛ր, դուք գիտեք, որ մեր գյուղին այս տարվա դարձանացանի համար տրված և ընդամենը 365 հեկտար ցանքի պլան, որից 180 հեկտ. կոլխոզինն է։

Գյուղխորհուրդն արդեն իր դծով մենատնտեսների նկատմամբ ամեն ինչ արել է և նրանք իրենց ու

ՂԱՐԻԲ.— Զկա՞ն: Ուրեմն որակարգն ընդունվա՞ծ է:

ՁԱՑՆԵՐ.— Ընդունված է:

ՂԱՐԻԲ.— Սկսենք, ընկերնե՛ր, կոլխոզին տրված պլանի քննությունը: Մեզ տրված 180 հեկտարից 150 հեկտ. պետք է ցանենք զուտ բամբակ (տեղերից շարժումներ և դժգոհության նշաններ), 10 հեկտար ցորեն, 10 հեկ. գարի, 5 հեկ. յոնջա, իսկ մնացած 5 հեկտ. ել բոստանի համար, ինչ ուզենք, կցանենք:

ՁԱՑՆԵՐ.— Զմերո՛ւկ, սե՛խ, պամիդո՛ր...

ՂԱՐԻԲ.— (Շարունակելով) ահա մեզ տրված պլանը: Հիմա խնդրում եմ, վոր արտահայտվեք: Այս պլանը ռեալ կարելի յե՞ համարել, թե վոչ...

ՁԱՑՆԵՐ.— Այո՛, այո՛. միանգամայն ռեալ պլան է, կարող ենք ընդունել:

ՀԱՑՐՈ.—(Մատը բարձրացնելով, կեղծ ժպիտով) ինձ ձայն տուր:

ՂԱՐԻԲ.— Հը՞. ի՞նչ ես ասում: Խոսիր, տեսնենք:

ՀԱՑՐՈ.— Ընկերնե՛ր, դուք գիտեք, վոր մեր իշխանությունը շատ մեծ նշանակություն և տալիս տարեցտարի ցանքսերի տարածությունները լայնացնելու դրծին: Իմ կարծիքով մեր կոլխոզը վոչ թե 180 հեկ. պետք է ցանքս անի, այլ ավելի: Մեր հողերը քիչ չեն: Մենք կարող ենք ցանքսի տարածությունը 20 հեկ. ավելացնել. այսինքն ցանել 200 հեկտար. 20 հեկտ. դեբակատարումով...

ՁԱՑՆԵՐ.— Ձե՛նք կարող, չե՛նք կարող: Մենք այդքան հող չունենք:

ՀԱՄԲՈ.— Հայրոն շատ ճիշտ է ասում. Պետք է 20 հեկ. ավել ցանենք:

ՍԱԹԻԿ.— Ընկերնե՛ր, մենք այդքան հող չունենք, որ Հայրոն ասում է: Մենք չենք կարող դռերի պես անպետք հողերում բամբակ ցանել, տանջվել և վոչինչ չստանալ: Մենք ուզենալով պլանները, դրանով խաբած կլինենք թե՛ կուսակցությանը, թե՛ կառավարությանը և թե մեզ:

ՄՈՒՇԵՂ.— Ընկերներ՝, ընկեր Սաթիկը աջ թեքման և ոպորտունիզմի մեջ է ընկնում: Ինչպե՞ս թե հող չունենք և չենք կարող դռերում բամբակ ցանել: Ցես ասում և շեշտում եմ, որ շատ էլ լավ կարող ենք: Պետք է ցանել, ուրիշ վոչինչ:

ԿՈԼԽՈԶՆԻԿ.— Ընկերնե՛ր, յես վոչ ագրամոն եմ և վոչ էլ ճառախոս—փստաբան: Ցես՝ ես կարող եմ ասել, որ մենք 180 հեկտարից ավել չենք կարող ցանել: Մենք ավել հող չունենք: Զդիտեմ Հայրոյի քթին ինչ քամի յե փչել: Դռերում բամբակ չի բուսնիլ:

ՋԱՑՆԵՐ.—(Կոլխոզնիկներից) շատ ճիշտ է, դռերում բացի ցորենից վոչ մի բան չի բուսնիլ:

ԴԱՐԻԲ.— Ընկերներ՝, աղմուկ մի անեք, մեկ մեկ խոսեք:

ՄԱԹ.— Ընկերնե՛ր, ընկեր Հայրոյի տեսակետն ու առաջարկությունը մենք ընդունել չենք կարող: Չենք կարող այն պարզ պատճառով, որ դա վոչ թե բղխում է պլանների գերակատարման կոնկրետ փաստից, այլ մեր՝ դասակարգային թշնամու ցանկությունից: Դա նշանա-

կում և պլաններն ուղղել և պրավալի յենթարկել բամբակի ամբողջ ցանքը:

ՄՈՒՇԵՂ.— Պրավալ մրավալ չկա: Մենք մեր ցանքի տարածությունը պետք և ավելացնենք, ուրիշ վոչինչ:

ՄԱԹ.— Վո՛չ, վո՛չ, վո՛չ,... 180 հեկտար արդեն ոյալ է և մենք չենք կարող վոչ մի վերշոկ ավելացնել...

ՂԱՐԻԲ.— Ընկերնե՛ր, խնդիրը պարզ է: Ցեկեք յերկար չխոսենք և 180 հ. ընդունենք ոյալ պլան:

ՁԱՅՆԵՐ.— Այո՛, այո՛,...

ՂԱՐԻԲ.—Ուրեմն քվեարկում եմ. ո՞վքեր են կողմնակից 180 հեկտար պլանին: Թողե՛ք: Ո՞վքեր են դեմ: (Հայրոն, Իսրոն, Համբոն և Մուշեղը): Լա՛վ, թողե՛ք: Անցնում ենք որակարգի 2-րդ խնդրին: Ընկերնե՛ր, յերկրորդ խնդիրը սերմֆոնդի զանձումն ու զտումն է: Պետք և ասել, վոր մենք շատ ենք ուշացրել: Ուրիշ գյուղեր արդեն զանձել և զտել, վերջացրել են: Պետք է այս շաբաթը հայտարարենք հարվածային շաբաթ, սերմֆոնդի զանձումը վերջացնենք և բոլոր կոլխոզնիկ կանանց լծենք բամբակի հունդի զտման աշխատանքներին:

ՄԱԹ.— Ընկերնե՛ր, այս մասին յերկար կարիք չկա խոսելու, վորովհետև բոլորին հայտնի յե, թե ի՛նչ խոշոր նշանակություն ունի սերմֆոնդի զանձումը, սերմի զտումը և ախտահանումը մեր ցանքի բերքատվության բարձրացման համար: Դա մեր կուսակցության և կառավա-

բության վերջումն է, որ պարտավոր ենք կատարել...

ՍԱԹԻԿ.— Այո՛, ընկերնե՛ր, կարիք չկա յերկար խոսելու։ Ցեռ դյուղի կոմյերիտականներին և պիոներներին տրամադրում եմ այդ աշխատանքներին։

ՀԱՅՐՈ.— Ընկեր նախագա՛հ, յես ուզում եմ մի խոսք ասեմ, բայց վախենում եմ, որ ելի մի պոչ կպցնեք։

ՂԱՐԻԲ.— Խոսիր, տեսնենք ի՞նչ պետք է խոսես։

ՀԱՅՐՈ.— Վերջհետև ժամանակը շատ է կարճ, չենք կարող հասցնել։ Համ էլ անցյալ տարվա փորձը ցույց տվավ, որ զուտան ժամանակ սերմը շատ են փչացնում...

ՀԱՄԲՈ և ԻՍՐՈ.— Շատ ճիշտ է։

ՂԱՐԻԲ.— Սո՛ւս արեք, իսկի էլ ճիշտ չի։ Իսկ քո ասելը ինչ է, Հայրո։

ՀԱՅՐՈ.— Ասելս այն է, որ ուշ է և այս տարի չենք կարող սերմը տալ։ Համ էլ մեր պապերը որ սերմը չեն գտ[illegible], քիչ բերք են ստացել։ Զո՞ւր բանս ելի՛, հնարել են...

ՄԱԹ.— Ընկերնե՛ր, չղիտեմ թե ինչո՞ւ համար՝ միշտ էլ ընկեր Հայրոն դեմ է դուրս գալիս մեր կուսակցության և կառավարության վերջումներին։ Դա կոլխոզնիկին վայել բան չի։

ՀԱՅՐՈ.— Ընկեր Մաթեոս, դա միանգամայն պրոլետարության և ձեր կողմից։ Ցեռ միշտ էլ կատարել եմ կուսակցության և իշխանության պահանջները։

ՂԱՐԻԲ.— Լա՛վ, լա՛վ, թողե՛ք, կարիք չկա յերկարացնելու: Քվեարկում եմ:

ՍԱԹԻԿ.— Ցեռ կարծում եմ, վոր այդ խնդիրը կարիք չկա քվեարկելու: Ուղղակի վորոշում ենք վաղվանից սկսել դանձման և զսման աշխատանքները, ուրիշ վոչինչ:

ՁԱՅՆԵՐ.— (Կոլխոզնիկներից) այո՛, այո՛. ճիշտ է. վաղվանից սկսել աշխատանքները:

ՂԱՐԻԲ.— Շա՛տ լավ, ուրեմն վորոշում ենք վաղվանից սկսել սերմֆոնդի դանձումը և զտումը:

ՀԱՅՐՈ.— (Կեղծ) ղեմ չե՛մ, սկսե՛նք...

ՂԱՐԻԲ.— Անցնում ենք որակարգի 3-րդ խնդրին: Ցերբորդ խնդիրը քաշող անասունների կերի խնդիրն է: Դուք գիտեք, վոր այս տարվա յերկար ձմեռվա պատճառով մեր յեղած կերն արդեն վերջացել է, իսկ գարնանացանի ժամանակ առանց կերի՝ կանգնելու յենք մեծ դժվարությունների առաջ և պրավալի յենթարկելու գարնանացանը: Մենք ունենք 20 զույգ յեզ և 15 հատ ձի: Դրանց կերակրելու համար բավականաչափ կեր և պետք: Ուրեմն պետք է մտածել կեր ձեռք բերելու մասին:

ՄԱԹ.— Ընկերնե՛ր, այդ մասին կարիք չկա յերկար խոսելու: Ցեռ գիտեմ, վոր Ս.-ի բամբակագործական սովխոզը մեծ քանակությամբ խոտ ու զարման ունի...

ՄՈՒՇԵՂ. (ամիսամբեր) Ե՛յ, մեզ ինչ թե ունի. Բաղդադում ել խուրմա շատ կա...

ՄԱԹ.— ...Ա՛ղ մի համբերիր, տես, ինչ եմ ասում

և...ինչո՞ւ յեռ կոտրած դդալի պես մեջտեղ ընկնում: Այդ սովխոզը բանվորական ձեռքերի շատ խիստ կարիք ունի: Մենք կարող ենք նրանց տալ օրական 15-20 աշխատող ձեռք և ստանալ խոտ ու դարման:

ՁԱՑՆԵՐ.— (կոլխոզնիկներից) շատ ճիշտ է: Մենք աշխատող ձեռքեր շատ ունենք:

ՍԱԹԻԿ.— Ընկերնե՛ր, միակ յելքը դա յե: Ուղղակի վորոշենք այդպես անել և առաջարկել կոլխոզի վարչությանը՝ պայմանագիր կնքի սովխոզի հետ և ստանա կերը:

ՄԱԹ.— Հենց վաղվանից:

ՀԱՑՐՈ.— Ընկերնե՛ր, վորքան ասում եմ չխոսեմ, սուս կենամ, չի լինում...

ՂԱՐԻԲ.— Ո՞վ է ասում սուս կենաս. յեթե խելոք խոսես, բոլորն էլ ուրախությամբ կլսեն և կընդունեն առաջներդ...

ՀԱՑՐՈ.— Ուզում եմ ասել, վոր դարման ցանքի այդ դժվար ժամանակ մենք չենք կարող մեր աշխատող ձեռքերը սրան-նրան տալ և կանգնել դրժվարությունների առաջ: Յեթե ուզում ենք պլանները լրիվ կատարենք, պետք է վո՛չ մի աշխատող ձեռքի ձեռք չտանք: Մեր հացի ֆոնդից պետք է վորոշ բան ծախել և դնել կեր:

ՄՈՒՇԵՂ.— Հայրոն ճիշտ է ասում, ընկերնե՛ր, աշխատանքի յեռուն ժամանակ մենք չենք կարող մեր աշխատող ձեռքերը սրան-նրան տալ: Կերը պետք է դնենք մեր հացի ֆոնդից:

ՄԱԹ.— Հայրոն ճիշտ է ասո՞ւմ: Չե՛, չե՛, դու

և ես ճիշտ ասում։ Ընկերնե՛ր, մենք մեր աշխատող ձեռքերից կարող ենք 10-15 հոգի տրամադրել Ս—ի սովխոզին։ Համ ոգնած կլինենք նրան, համ էլ կերով կապահովենք մեր անասուններին։ Եթե կերի խնդիրն էլ չլինի, պարտավոր ենք ոգնելու սովխոզին։ Մի՞թե նա մերը չե՞։

ՍԱԹԻԿ.— Ճիշտ ասում Մաթեվոսը։ Մենք պարտավոր ենք ոգնելու սովխոզին։

ՂԱՐԻԲ.— Ընկերնե՛ր, կարծում եմ, վոր խնդիրը բավականին պարզ է։ Ես քվեարկում եմ։ Ո՞վ է կողմնակից այս առաջարկի՛ն. թողե՛ք։ Իկ ո՞վ է դեմ (դեմ են Հայրոն, Իսրոն և Համբոն)։ Ձեռնպահ. Մուշեղը։

ՄԱԹ.— (բարկացած) ասա՛, դու ի՞նչ տեսակ մարդ ես։ Կուսակցական ես, գյուղխորհրդի նախագահ ես, վճռական յեղիր, ելի՛, կամ դեմ քվեարկիր, կամ կողմ, ձեռնպահս վո՞ւրն է...

ՄՈՒՇԵՂ.— Կարծում եմ ամեն մարդ իրավունք ունի անելու այն, ինչ վոր ինքն է ցանկանում, ինչպես վոր ինքն է մտածում։

ՂԱՐԻԲ.— Ընկերնե՛ր, լա՛վ, թողեք խոսակցությունները։ Ուրեմն անցնում է։ Թույլ տվեք անցնելու որակարգի 4-րդ խնդրին։ 4-րդ խնդիրը նոր կուլակների հայտնաբերելու խնդիրն է։ Մեր գյուղում կան մի քանի ուռճացած տնտեսություններ, վորոնք ունեն չահագործման որյեկտներ ու հատկանիշներ։ Այս անցած աշ-

նանը Մլեյի Սաքոն, Շարոյի Գարոն և Գնոյի Ոհանը բավականաչափ ողի՛ յեն քաշել և տարել հարևան գյուղերում թանգ գներով ծախել։ Բացի դրանից՝ այդ աշխատանքի մեջ նրանք բանեցրել են բանվորներ։ Այդ յերեքի յեկամուտը միասին կազմում է 25 հազար ռուբլի։ Ուրեմն դրանցից պետք է գանձվի վորոշ դուրմար և դրկվեն ընտրական ձայնի իրավունքներից։

ՄԱԹ.— Ցես առաջարկում եմ այդ խնդիրը հանձնել Գ.Խ-ին. նա համաձայն դոյություն ունեցող որենքների՝ կքննի դրանց գործը և կանի այն, ինչ վոր հարկն է։

ՍԱԹԻԿ.— Այո՛, այդպես պետք է անել։

ԻՍՐՈ.— Ընկերնե՛ր, մի՞թե մեր գյուղում կուլակներ կան։ Չե՞ վոր կուլակներին վերարցել ենք։ Ցես շատ լավ գիտեմ, վոր այդ յերեք տնտեսությունները շատ չնչին քանակությամբ յեն քաշել և տարել ցորենի հետ փոխել, վորպեսզի իրենց յերեխաները քաղցից չմեռնեն։ Վերջապես խիղճը լավ բան է, չե՞. ինչո՞ւ յեք մարդկանց սպանում...

ՁԱՅՆԵՐ.— (կոլխոզնիկներից) դե լա՛վ, քեզ ել ենք ճանաչում. ո՛վ խոսի, չխոսի՛, հալա դու մի խոսի՛։ Խղճի մասին ես խոսում։ Գիտենք թե ի՞նչ խղճի տեր ես... Կոլխոզի ամենաառաջի թշնամին դու յես...

ԻՍՐՈ.— Ընկեր նախագա՛հ, ինչո՞ւ յեն ինձ վիրավորում, ինչո՞ւ չեք լսեցնում։

ՂԱՐԻԲ.— Լռությո՛ւն, ընկերնե՛ր, թողե՛ք, մի աղ-մկեք...

ՄՈՒՇԵՂ.—Ընկերներ, խնդրում եմ հալալված, հանդարտված դյուղը նորից չխառնեք, նորից իրարու դեմ թշնամություններ չանենք: Վորտեղի՞ց ե մեր դյուղում կուլակ: Մեր դյուղում կուլակ չկա՛, հասկացե՛ք: Դյուղում բելա կուլակ չկա՛...Համ ել խնդրում եմ դյուղխորհրդի գործերին չխառնվեք: Կուլակները վերացել են: Նրանց մի մասը դյուղից հեռացրել ենք, մի մասին կուլակաթափ ենք արել, ձայները վերականգնել և այսոր նրանցից շատերը մեր կոլխոզումն են և շատ լավ ել աշխատում են: Վերջապես չե՞ վոր ընկեր Ստալինն ասել ե, վոր կուլակներին վոչնչացրել ենք, վորպես դասակարգ:

ՄԱԹ.— Ստալինը այդպիսի բան չի ասել, դա դու ես հնարել՝ կուլակների հետ միասին:

ՄՈՒՇԵՂ.—Ասել ե, յես վոչ մի բան չեմ հնարում...

ՍԱԹԻԿ.— Դու քոռացել ես, ուրիշ վոչինչ: Կուլակները հոլս կողմդ վխտում են, իսկ դու նրանց չես տեսնում...

(Հայրոն, Համբոն և Իսրոն անհանգիստ շարժումներ են անում, իրար յերեսի նայում):

ՄԱԹ.— Այո՛, ընկերնե՛ր, կուլակը, դաշնա՛կը, տրոցկիստը և նրանց ագենտները մեզ մոտ նստած, իսկ մենք նրանց ճրագով ենք փնտրում ու չենք գտնում:

ՄՈՒՇԵՂ.— Ե՛, չկա՛, վորտեղից գտնե՞ս...

ՍԱԹԻԿ.— Կա՛ն, շա՛տ կան, ընկեր դյուղխորհրդի նախագա՛հ...

ՄԱԹԵՎՈՍ.— Բայց մենք կղտնենք նրանց և այն ժամանակ կիմանանք, թե ի՞նչ պետք է անենք...

ՄՈՒՇԵՂ.— Լա՛վ, գտնք և արե՛ք...

ՂԱՐԻԲ.— Ընկերնե՛ր, կարիք չկա դրա մասին խոսել, քանի վոր առաջարկ յեղավ այդ խնդիրը հանձնարարել Գ.Խ-ին: Անցնենք որակարգի վերջին խնդրին: Մեզ մոտ կան մի քանի նոր դիմումներ՝ կոլխոզ մտնելու համար: Թույլ տվնք կարդալ այդ դիմումները: (Կարդում է) Խուդրաթ Ալոյան, Մուրադ Մուրադյան, Ղազար Պետրոսյան, Հակոբ Սարգսյան, (ձայներ).— Վո՞ր Հակոբն է. (Նախագահ)—Եղոյի Հակոն:

Սրանք են, ընկերներ: Ո՞վքեր է նուզում խոսել:

ՄԱԹ.— Ընկերնե՛ր, դուք գիտեք, թե անցյալում ով է յեղել Ղազար Պետրոսյանը: Նա անցյալ տարի միայն ձայնը վերականգնեց: Նա Խորհրդային իշխանության հիմքերը քանդողներից է և այսոր էլ, չեմ կարծում, վոր քանդելիս չ՝ լինի և վորպեսզի Խ. Իշխանության հիմքերը ավելի ակտիվ կերպով քանդի, դալիս է կոլխոզ, վոր վոչ վոք չնկատի նրա սև աշխատանքը: Պետք է զգույշ լինել, ընկերնե՛ր: Նրան չի կարելի, չե՛:

ՍԱԹԻԿ.— Ցեռ միանդամայն համաձայն եմ ընկեր Մաթևոսի ասածների հետ:

ՄՈՒՇԵՂ.— Ընկերնե՛ր, ինչո՞ւ Մուրադ Մուրադյանին

կարելի յեր ընդունել, իսկ Ղազար Պետրոսյանին չի կարելի: Մ. Մուրադյանը ավելի յեր հակառակ յեղել Ա. Իշխանության, քան թե Ղ. Պետրոսյանը...

ՄԱԹ.— Մ. Մուրադյանը, վորպես չքավոր գյուղացի, հենց այդ Ղ. Պետրոսյանը և նրա նմանները մոլորեցրել և իրենց ազդեցության տակ եյին գցել նրան: Նա Ա. Իշխանության հասցեյին խոսում եր կուլակների ազդեցությամբ, նրանց բերանով: Նրա շահերը հակառակ չեն մեր շահերին: Մ. Մուրադյանը այսոր հասկացել, գիտակցել և իր սխալները և համոզված է, վոր մենակ ճի՛շտ, շիտա՛կ ճանապարհը՝ դա կոլխոզն է: Այո՛, կոլխոզը, վորը ստեղծել եր Ա. Իշխանությունը: «Ձախ» քյալլաղյոզություն կլինի, յեթե մենք Մ. Մուրադյանի պես չքավոր տնտեսություններին չընդունենք կոլխոզ:

ՁԱՅՆԵՐ.— (կոլխոզնիկներից) շատ ճիշտ է, նրանց պետք է ընդունել...

ՄՈՒՇԵՂ.— Ցես դեմ եմ....

ՍԱԹԻԿ.— Դարոզ ե՞ս դեմ լինել....

ՀԱՅՐՈ.— Ընկերնե՛ր, Ղազար Պետրոսյանը վատ անցյալ չունի: Ճի՛շտ է. նա յեղել է մեր գյուղի ամենամեծ ունևորը, բայց նա սովի տարիներին մեծ ոգնություն է ցույց տվել մեր գյուղի չքավորներին...

ՄԱԹ.— Ընկերնե՛ր, վաշխառուական նպատակներով մեկին տասն է վերցրել, Ցվրանք այդ ոգնությունը»...

Ա 1/8500
18665

ՀԱՅՐՈ.— Նա Խ. Իշխանության հանդեպ վոչինչ չէր արել և միշտ էլ իր պարտականություններն ու կոնտրակտացիաները բարեխիղճ կերպով կատարել է:

ՄՈՒՇԵՂ.— Ճիշտ է...

ՀԱՄԲՈ ՑԵՎ ՀԱՅՐՈ.— Մարդը վատ մարդ չի՛, իզուր տեղից եք բամբասում:

ՁԱՅՆԵՐ.— Ձեզ համար շատ լավ մարդ է:

ՍԱԹԻԿ.— Լավ ենք ճանաչում...

ՂԱՐԻԲ.— Ընկերնե՛ր, թույլ տվեք մեկ-մեկ քվեարկել: Ո՞վ է կողմնակից Խուդրաթ Ալոյանին ընդունել կոլխոզ. Ո՞վ է դեմ. (Հայրոն, Համբոն և Իսրոն). Էլի ներանք: Ով է ձեռնպահ. Էլի Մուշեղը, լա՛վ, թող մատդ: Մուրադ Մուրադյա՛ն, թողե՛ք. ո՞վ է դեմ. Էլի են յերեքը. թողե՛ք. ո՞վ է ձեռնպահ. Էլի Մուշեղը. թո՛ղ...

ՄԱԹ.— (հուզված) ա՛յ յես քեզ մարդ ասողին ինչ ասեմ հա՛.... տո՛, բա մարդ ե՞ս....

ՄՈՒՇԵՂ.—Ցես եսպես եմ, ասելդ ի՞նչ....

ՂԱՐԻԲ.— Լսեցե՛ք. Հակոբ Սարգսյան. ո՞վ է կողմնակից. թողեք, ո՞վ է դեմ. Էլի են յերեքը. իսկ ո՞վ է ձեռնպահ...

ՍԱԹԻԿ.— Մուշեղը, էլ ո՛վ պիտի լինի...

ՄՈՒՇԵՂ.— Ցես այդպես եմ, ամենալավ բանը ձեռնպահ մնալն է...

ՄԱԹ.— Քեզ ցույց կտանք, թե ի՞նչ է նշանակում ձեռնպահ մնալ:

ՂԱՐԻԲ.— Լռությո՛ւն, ընկերնե՛ր: Ղազար Պետրոսյան. ո՞վ է կողմ. Հայրոն, Համբոն, Իսրոն,

ո՞վ է դեմ (բոլորը դեմ են)։ լա՛վ, թողե՛ք, իսկ ո՞վ է ձեռնպահ։ Ելի Մուշեղը։ Ընկերնե՛ր, ուրեմն 4 դիմումներից ընդունվում են յերեքը, իսկ Ղազար Պետրոսյանը չի ընդունվում։ Ընկերնե՛ր, նախքան ժողովը փակելը՝ թույլ տվեք նորից հայտարարել, որ վաղվանից պետք է սկսել սերմի դառումը, Ս.-ի սովխոզի հետ պայմանագրի կնքելը, գյուղդրծիքների նորոգման աշխատանքները։ Գյուղխորհուրդը պետք է առանց ուշացնելու վաղը և յեթե համայնքի ժողով հրավիրի և դնի անհատական տնտեսությունների սերմի դաման, գյուղդրծիքների նորոգման, հողերի պարարտացման և քաշող անասունների կերի ապահովման խնդիրները։ Մենք չենք կարող մոռացության տալ անհատական տնտեսությունները այս մարտական դարնանացանին։

ՄԱԹ.— Անգամ յեթե հնարավորություն ունենանք, պետք է ոգնության հասնենք նրանց, որպեսզի նրանք հաջող կերպով կատարեն իրենց գարնանացանի պլանները։

ՁԱՑՆԵՐ.— (կոլխոզնիկներից), շատ ճիշտ է։ Պետք է ոգնել։

ՍԱԹԻԿ.— Ի հա՛րկե, չենք կարող մեր վաղվա կոլխոզնիկներին մոռանալ և չոգնել։

ՂԱՐԻԲ.— Այո՛, ընկերնե՛ր, դրա մասին խոսք լինել չի կարող։ Կոգնենք, որքան որ մեր ուժերը կներեն...

ՄՈՒՇԵՂ.—Դուք ընկնում եք «ձախ» թեքման մեջ։

Կոլխոզը հազիվ կարողանա իր պլանները կատարել։ Մենք չենք կարող անհատականներին ոգնել։ Թող իրանք իրենց հոգսը քաշեն։ Ոգնելով, վատ կսովորեցնենք նրանց և հետագայում կոլխոզ չեն մտնի...

ՄԱԹ.— Ա՛, դե բավական է, վորքան հիմարություններ արիր ելի՛, վերջապես դո՞ւ հասկանում ե՞ս, թե ինչ ես խոսում։

ՄՈՒՇԵՂ.— Ցեռ շատ լավ եմ հասկանում։ Կոլխոզը թող իրա համար աշխատի, անհատներն ել իրենց համար, ուրիշ վոչի՛նչ։

ՄԱԹ.— Կարիք չկա այստեղ քեզ հետ խոսել ու վիճել, միևնույն ե՝ բան չես հասկանալու։ Քեզ հետ կխոսենք շրջկոմում...

ՄՈՒՇԵՂ.— Կխոսե՞նք, չեմ վախենում...

ՂԱՐԻԲ...— Ընկերնե՛ր, թողե՛ք վիճաբանությունը։ Ժողովը հայտարարում եմ փակված։

(վիճելով և աղմկելով հեռանում են բեմից)։

(Վարագույր)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԿՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է Համբոյի տունը: Պատրաստված է ճոխ սեղան: Ուտում, խմում են և զզույշ խոսում: Ուշ գիշեր է:

ՏԵՍԻԼ Ա.

Համբո, Իսրո և հետո Հայրո.

ՀԱՄԲՈ.— (Զգուշությամբ չորս կողմը նայելով) *Հիմա յել համատարածի ժամանակը չի: Են ժամանակվա զենքերը ժանգոտվել, անպետքացել են: Հիմա ուրիշ զենքեր են հարկավոր: Պետք է փոխել կռվի ձևերը....*

ԻՍՐՈ.— *Հիմա պետք է դեմ չլինել կոլխոզին. ընդհակառակը, պետք է, թե ժողովներում և թե դյուղում խոսել, քարոզել կոլխոզը աճեցնելու ոգտին, նրա մեջ ընդունելով մեր դասակարգի մարդկանց, դժգոհներին և նրանց, վորոնք դեռ ևս գտնվում են մեր ազդեցության տակ: Մեր ուզած պայքարը, քայքայիչ աշխատանքները պետք է տանել կոլխոզի ներսում...*

(Մտնում է Հայրոն):

ՀԱՄԲՈ.— *Ինչո՞ւ ուշացար, ա՛յ, մարդ...*

ՀԱՅՐՈ.— *Գործ կար, ենել շատ հետաքրքիր գործ...*

ԻՍՐՈ.— *Ի՞նչ գործ...*

ՀԱՑՐՈ.— Մուշեղի մոտ եյի: Շրջկոմին գրեցինք, վոր կոմունիստները դեմ են կոլխոզի աճմանը, վոր նրանք թույլ չեն տալիս միջակ, հարստատ տնտեսություններին մտնելու կոլխոզ, վոր նրանք քայքայում են կոլխոզը, վոր գարնանացանի պլանները շատ քիչ են ընդունել և այլն և այլն...

ՀԱՄԲՈ.— Շա՛տ լավ եք արել, Հայրո՛: Ահա՛, նույնպես այդ ձևով պետք է պայքարել և քայքայել կոլխոզը: Ահա՛, Ա. իշխանության և կոլխոզների դեմ պայքարելու նոր ձևերը, քաղաքականությունն ու տակտիկան:

ԻՍՐՈ.— Ցեվ այդ ձևով մենք կհաղթենք, կհասնենք մեր նպատակին...

ՀԱՑՐՈ.— Մի վախենաք, շատ կողմնակիցներ ունենք. ապագա հաղթանակը մերն է: Այժմ անցնենք մեր անելիքներին: Մենք էլ մեր պլանը կազմենք բայլևիկյան գարնանացանին մասնակցելու համար (ծիծաղում են) հա՛, հա՛, հա՛...

ՀԱՄԲՈ և ՀԱՑՐՈ.— (ծիծաղելով) հա՛, հա՛, հա՛, բայլևիկյան գարնանացա՞ն...

ՀԱՑՐՈ.—Մենք նրանց գարնանացան ցույց կտանք...

ՀԱՄԲՈ.— Դե՛, վոր այդպես է, խմենք մեր հաղթանակի կենացը (բաժակները իրար խփելով, խմում են):

ՀԱՑՐՈ.— Ընկերնե՛ր, ը՞... թյո՛ւ, ի՛նչ եմ ասում. պարոննե՛ր, լցրեք բաժակները, խմենք այն կուսակցության կենացը, վորը արտատահմանում նստած, դիշեր ցերեկ մեր մասին, մեր

ապրի, մեր կրոնի և մեր անկախության մասին և մոռածում։ Առանց այդ կուսակցության՝ սև և մեր ապագան, խավար է մեր կյանքը։

ՀԱՄԲՈ.— Հա՛, հա՛։ Մատաղ լինեմ նրանց ջանին։ Ցերանի այն որին, վոր նորից կտեսնենք նրանց վոտքը մեր սուրբ հայրենիքի հողի վրա....

ՀԱՑՐՈ.— Շուտո՛վ, շուտո՛վ ...այժմ, պարոննե՛ր, անցնենք կոնկրետ աշխատանքի։

ՀԱՄԲՈ.— Համ ուտենք, խմենք, համ էլ խոսենք...

ԻՍՐՈ.— Կարելի յե, չի խանգարում։

ՀԱՑՐՈ.— Մենք յերբե՛ք դեմ չպետք է լինենք կոլխոզի ամմանը։ Ընդհակառակը, վորքան հնարավոր է, պետք ենք աշխատել բոլոր գյուղացիներին քաշել կոլխոզի մեջ։ Ի հա՛րկե, առաջին հերթին մերոնց, Մուրադի նմաններին։ Ահա՛, միայն այդ դեպքում մեզ կհաջողվի քայքայել կոլխոզը կամ նա՝ առանց կոմունիստների դարձնել մերը։ Այսպես է դրված խնդիրը վողջ Միության մեջ։

ԻՍՐՈ.— Այո՛, կոլխոզ առանց կոմունիստների։

ՀԱՑՐՈ.— Ներկայն ժամանակ պետք է քայքայիչ, վնասարար աշխատանքներ տանել տրակտորների, գյուղգործիքների, հացի ֆոնդերի, պետական մթերումների և բերքի բարձրացման դեմ։

ՀԱՄԲՈ.— Ինչպե՞ս. պարզ խոսիր...

ՀԱՑՐՈ.— (Խմելով).— Ահա՛ թե ինչպես։ Պետք է աշխատենք, թե ՄՏԿ.-ում և թե դաշտերում, հանել, փչացնել տրակտորների վորոշ կարևոր մասեր. նույնը և գյուղգործիքների վերա-

բերյալ։ Հետո կոլխոզնիկներին ասել, համոզել, որ պետությունն ինքը հարուստ է, մեր հացի, մթերքների կարիքը նա չի զգում, որ պետք է մեր ֆոնդերը հարստացնենք և այլն և այլն. պետք է նաև մթերումների ժամանակ լավ կազմակերպել սարքաժը։ Պետք է պայքարել պարարտացման դեմ, պատճառաբանելով, որ պարարտանյութերը այրում, ուժից գցում են հողը և այլն և այլն։ Ա՜հա՛, այսպիսով բավական հեշտ կերպով կարող ենք խանգարել և տապալել կոմունիստների բոլոր ձեռնարկումները, նրանց ամեն տեսակի պլանները, գլխավորապես ցանքի գծով...

ՀԱՄԲՈ.—Սոցիալիզմի կառուցո՞ւմը... (ծիծաղում են)։

ԻՍՐՈ.— «Ընկեր» Ստալինի ծրագիրնե՞րը... Հա՛, հա՛, հա՛, (ծիծաղում են)։

ՀԱՄԲՈ.— (Լցնելով բաժակները). մեկ մեկ ել խմենք այն մարդկանց կենացը, որոնք մեր դատի, մեր շահերի համար աքսորվել են Սիբիրի խորքերը կամ թե նստած են բայշևիկների դաժան բանտերում.... (բաժակները խփելով, խմում են)։

ՀԱՑՐՈ.— Նրանք շուտով կազատվեն։ Անգլիան, Ֆրանսիան, Ամերիկան և Ցապոնիան վողջ լինեն. նրանք իրենց գործը գիտեն...

ՀԱՄԲՈ.— Մե՛րը չմեռնի նրա՞նց....

(Դուռը ծեծում են. սրանք սարսափում են և բերանները բաց՝ մնում քարացած)։

ՀԱՄԲՈ.— Ո՞վ է՞... ո՞վ է՞.....

ՉԱՑՆ — (դրսից) — Ցես եմ. դուռը բաց արեք...

ՀԱՄԲՈ — Մուշեղն է (գնում է դուռը բաց անում):

ՄՈՒՇԵՂ — Բարև՛ ձեզ: Ի՞նչ եք անում: Մենակ, մենակ նստել եք և ուտում-խմում եք...

ՀԱՑՐՈ — Դե՛, ի՞նչ անենք, կոմունիստ ես, սարսի չես անում մեզ հետ նստե՞ս, վեր կենա՞ս:

ԻՍՐՈ — Դե՛, մենք անկուսակցական ե՞նք, չե՞նք սաղիլ կուսակցականների հե՞տ:

ՄՈՒՇԵՂ — Սխալվում եք: Իմ վերաբերմամբ այդ բանը չեք կարող ասել: Ցես հավասար աչքով եմ նայում բոլորի վրա: Ցես «ձախ»-երի պես չեմ: Ցես Լենինի ճանապարհով եմ գնում....

ՀԱՑՐՈ — (խորամանկությամբ) ճի՛շտ է. յերանի թե բոլոր կոմունիստներն էլ Մուշեղի պես լինեյին:

ՀԱՄԲՈ — Ի հարկե: Մուշն ուրի՛շ մարդ է: Ցեթե դա մեր գյուղում չլիներ, հիմա գյուղը քանդված կլիներ: (Լցնենք բաժակները և խմենք մեր լավ Մուշոյի կենացը (խմում են):

ՄՈՒՇԵՂ — Շատ շնորհակալ եմ, ընկերներ: Ձեզ նման ակտիվ և ակտիվ կոլխոզնիկների միջոցով է, որ մեր գյուղի կոլխոզը այնքան աճել և ուժեղացել է: Շնորհակալություն (խմում է):

ՀԱՄԲՈ — Ինչ նորություն կա Մուշո...

ՄՈՒՇԵՂ — Առանձին նորություն չկա: Ղարիբը տրակտորները բերեց:

(Նրանք իրար են նայում):

ՀԱՑՐՈ — Քանի հատ է բերել....

ՄՈՒՇԵՂ — Չորս հատ...

ԻՍՐՈ.— Զո՛ր... բավական չատ է: Բավական է մեզ....

ՀԱՄԲՈ.— Պլանները ժամանակին կկատարենք...

ՀԱՑՐՈ.— Ավելի շուտ: Դե՛, թող թշնամիները ճաքեն...

ՄՈՒՇԵՂ.— Կարծում եմ, պետք է չութը թողնել: Հա՛. նա խանգարում է մեզ....

ՀԱՑՐՈ.— Համ էլ ամոթ է: Հանկարծ տրակտորի մոտ յե՛ղ... չո՛ւթ...

ՀԱՄԲՈ.— Այո՛, պետք է ձեռք քաշել դրանցից, պատիվ չի բերում: Ցերկաթե ձիերի կողքին հանկարծ թամբալ յեղներ և քոսոտ ձիեր...

ՀԱՄԲՈ.— Ընկեր Մուշո, ինչո՞ւ մեր գյուղի մնացած կոմունիստները քեզ պես չեն և քեզ պես չեն մտածում....

ՄՈՒՇԵՂ.— Դրա համար էլ խիարը ծուռ է բուսնում, իրար հետ չենք բարիշում....

ՀԱՑՐՈ.— Շուտով Մուշոն նրանց բոլորին ցույց կտա, թե ի՞նչ է նշանակում կոլխոզի աճմանը դեմ գնալ, խանգարել գյուղի աշխատանքները և կոլխոզի գոները փակել ազնիվ ու ակտիվ մի-ջակների առաջ..

ՄՈՒՇԵՂ.— Ինչ վոր հարկավոր եր, գրեցի և ուղարկեցի.....

ՀԱՑՐՈ.— (Իբր թե չգիտե) Ի՞նչ գրեցիր, ո՞ւմ գրեցիր:

ՄՈՒՇԵՂ.— Ինչ վոր հիմա խոսեցինք: Գրեցի շրջկոմին....

ՀԱՑՐՈ.— Կարծում եմ, վոր կարիք չկար...

ՀԱՄԲՈ ՑԵՎ ԻՍՐՈ.— Ինչո՞ւ. շատ մեծ կարիք կար։ Լավ ես արել, Մուչո, ապրե՛ս...

(Դրսից լսվում է տրակտորների ձայնը)։

ՄՈՒՇՈ.— Դուրս գանք, տեսնենք, ի՞նչ են չինում (դուրս են գնում նրա հետևից մյուսները)։

ՑԵՐԵՔՈՎ.— Գնանք կատարենք Խ. Իշխանության սեալ պլանները (ծիծաղում են) *Հա՛, հա՛, հա՛.....*

(ՎԱՐԱԳՈՒՅՐ)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՐՐՈՐԴ

Գյուղխորհրդի դրասենյակը։

Կոլխոզի, գյուղխորհրդի, կուսբջիջի և կոմսոմոլի միացյալ ընդհանուր ժողովն է։

Ցերեկ է։ Բոլորը հավաքված են։

ՏԵՍԻԼ Ա.

ՂԱՐԻԲ.— Ընկերնե՛ր, արդեն բոլորը հավաքվել են. կարծում եմ կարելի է ժողովը բացել։

ՁԱՑՆԵՐ.— Կարելի է՛, կարելի է՛։

ՂԱՐԻԲ.—Ընկերնե՛ր, կոլխոզի, գյուղխորհրդի, կուսբջիջի և կոմսոմոլի միացյալ ընդհանուր ժողովը հայտարարում եմ բացված։

Որակարգում կան հետևյալ խնդիրները.

1. դարնանացանը, 2. բրիգադների ընտրությունը և 3. տրակտորների, գյուղգործիքների նորոգման և սերմֆոնդի դանձման ու գտման ընթացքի մասին։ Ուրիշ հարցեր չկա՞ն։

ՁԱՑՆԵՐ.— Չկան...

ՂԱՐԻԲ.— Թույլ տվեք որակարգը համարել ընդունված։ Առաջին խնդրի մասին զեկուցելու եմ ես։ Ընկերնե՛ր, խիստ և յերկար ձմեռ լինելու պատճառով այս տարի դարնանացանն ուշացավ։

Ներկայումս դաշտերից ձյունը վեր և կացել և կարելի յե հենց վաղվանից սկսել հերկն ու ցանքը: Մենք արդեն ամեն ինչով պատրաստ ենք գարնանացանը սկսելու: Ուշացնելը կարող է տապալել մեր պլանները և ուրախացնել դասակարգային թշնամիներին:

Դասակարգային թշնամին քնած չե: Նա ամեն կերպ աշխատելու յե խանգարել մեր գարնանացանը: Մենք պետք է արթուն լինենք, հարվածենք նրա բոլոր վտանգություններին և ապահովենք գարնանացանը:

Ամեն մի կոլխոզնիկ, դյուղխորհրդի ամեն մի անդամ, յուրաքանչյուր կոմունիստ և կոմսոմոլիստ՝ պետք է աչքերը հազար դարձնեն, ականջները սրեն և հսկեն Հոկտեմբերյան Հեղափոխության նվաճումներին, մեր բոլոր աշխատանքներին, շարունակ սուր պահեն իրենց դասակարգային պայքարի զենքերը և հարկ յեղած դեպքում՝ փչրեն կուլակության և նրանց ագենտների դիմադրությունը:

Վերջացնելով խոսքս, առաջարկում եմ՝ այսոր, այս ժողովում ընտրել բրիգադները՝ իրենց բրիգադավարներով, հենց այս գիշեր պատրաստել բոլոր գործիքները, սերմացուն և վաղվանից սկսել հերկն ու ցանքը: Ցեսս վերջացրի: Ո՞վ է ուզում արտահայտվել այս խնդրի շուրջը:

ՄԱՔ.— Ցերկար ու բարակ խոսելու կարիք չկա: Հենց այժմ անցնենք բրիգադների կազ-

մակերպման աշխատանքներին և վաղվանից սկսենք գարնանացանի աշխատանքները։

ՍԱԹԻԿ.— Այո՛, առանց ուշացնելու սկսել աշխատանքները...

ՀԱՄԲՈ.—Առանց ուշացնելու պետք է սկսե՛լ, բայց կարծում եմ՝ չութերն այնքա՞ն էլ ոգուտ չեն մեզ...

ԻՍՐՈ.—Վոչ մի այն ոգուտ, այլև վնաս են։

ՀԱՑՐՈ.— Պատիվ չի բերում տրակտորի կողքին դնել չութն ու յեզը։ Ցեսս կարծում եմ, վոր պետք է ձեռք քաշել հին, պապենական փթած չութից։ Տրակտորի դարում հանկարծ փայտի չո՞ւթ։ Նոյի դարի՞ց։

ՄՈՒՇԵՂ.—Ավտոյի մոտ՝ քոսոտ եշ (մի քանիսը ծիծաղում են)։

ՂԱՐԻԲ.— Ընկերնե՛ր, մենք դեռևս չենք կարող չութը, զութանը, յեզն ու ձին դուրս հանել գյուղատնտեսական աշխատանքներից։ Մենք պետք է ոգտագործենք նրանց։ Նրանք, վորոնք դեմ են գարնանացանի, առհասարակ գյուղատնտեսական աշխատանքներին, չութի գործածությանը, նրանք դեմ են մեր կուսակցության, կառավարության վորոշումներին, մեր ցանքային քաղաքականությանը, նրանք «ձախ» քայլլագյողություններ են անում և մտածված կերպով ուզում են տապալել գարնանացանի աշխատանքները։ Այդպես ասողներն ու մտածողները խոսում են կուլակի բերանով, պարում են մեր դասակարգային թշնամու դուդուկով։

Վո՛չ մի խոսք չի կարող լինել չուրը հանելու մասին։ Դեռ մենք այնքան մեծ քանակությամբ տրակտորներ չունենք, որ չուրերն ու գութանները գործածությունից հանենք։

ՄԻ ԿՈԼԽՈԶՆԻԿ.— Ընկերնե՛ր, չուրից վնաս չկա։ Փորձը ցույց է տվել, որ չուրն ահագին ոգնություն է ցույց տվել մեր բոլոր ցանքսերին։ Եթե անցյալ տարի մեր քսան չուրը չլիներ, մենք չեյլինք կարող ժամանակին ավարտել գարնանացանը։ Չուրն այն ժամանակ կվերացնենք, երբ կունենանք շատ տրակտորներ։

ՁԱՑՆԵՐ.— Ճի՛շտ է՛, ճի՛շտ է։

ՂԱՐԻԲ.— Ընկերնե՛ր, խնդիրը պարզ է։ Անցնենք որակարգի 2-րդ խնդրին։ 2-րդ խնդիրը բրիգադների ընտրությունն է։ Իմ կարծիքով պետք է ընտրենք ութ բրիգադ։ Ավել կարիք չկա։

ՄԱԹ.— Ութը բավական է։

ՄՈՒՇԵՂ.— Ութը շատ է։ Ես առաջարկում եմ ընտրել հինգը։

ՍԱԹԻԿ.— Հինգը քիչ է։ Վորպեսզի մեր աշխատանքները ծանր չլինեն և պլանները պրավալի չենթարկվեն, պետք է ութից պակաս չլինեն։

ՀԱՑՐՈ.— Շատն այն տեսակետից է վատ, որ բրիգադները թույլ կլինեն։

ՄԱԹ.— Ընդհակառակը՝ աշխատանքներն ավելի արագ և ժամանակին կատարելու համար՝ պետք է շատ լինեն և վոչ թե քիչ։

ՂԱՐԻԲ.— Ընկերնե՛ր, յերկար կարիք չկա խոսել։ Ես ուղղակի քվեարկում եմ։

ՄԱԹ.—Այո՛, քվեարկե՛լ։

ՂԱՐԻԲ.— Ո՞վ է կողմնակից, վոր կաղմենք ութ բրիգադ։ Թողե՛ք։ Ո՞վ է դեմ։ Միշտ նրանք (դեմ են Հայրոն, Համբոն, Իսրոն և մ իֆանի հոգի), իսկ ո՞վ է ձեռնպահ.

ՄՈՒՇԵՂ.— Ցե՛ս...

ՍԱԹԻԿ.— Ցերեսդ պա՛րզ։

ՂԱՐԻԲ.— Անցնում ենք 3-րդ խնդրին. խոսքը տրվում է ընկեր Մաթեվոսին։

ՄԱԹ.— Ընկերնե՛ր, Մ.Տ.Կ.-ը մեր հերկն անելու համար տվել է չորս հատ տրակտոր, վոր մեր հութերի և դութանների հետ միասին միանգամայն բավական է և ապահովված է մեր կոլխոզի գարնանացանը։ Արդեն մեր արհեստանոցում նորոգել, կարգի յենք բերել բոլոր գյուղատնտեսական գործիքները, վորոնք այնքան էլ վատ չեն իրենց վորակով։ Կարիք կա էս հինգ նոր դութանի։ Հաշված մեր յեղներն ու ձիերը՝ դութանները քիչ են։ Այդ հինգ դութանը հենց վաղվանից կարելի յե ստանալ մեր Մ.Տ.Կ.-ից։ Իսկ ինչ վերաբերում է սերմֆոնդի դանձմանը և սերմի զբաղմանը, պետք է ասել, վոր աշխատանքները բավական դանդաղ են գնում։ Դրա պատճառը կուլակների, դասակարգային թշնամու պրովակացիաներն են։ Այս բնագավառում էս նա տարել է իր սև, խլուրդային, քայքայիչ աշխատանքները։ Դասակարգային թշնամին հալածացրել է շատերին, վոր սերմֆոնդը պե-

տությունը պետք է տա և վոչ թե կոլխոզն ինքը պիտի գանձի, վոր կոլխոզնիկները ուտելու հաց չունեն, վորտեղից կարող են սերմ տալ: Նույնը և սերմի գոմաս մասին: Նրանք ասում են, վոր կարիք չկա սերմը գտել, վոր բերքի բարձրացման համար գոտեմը վոչ մի նշանակություն չունի, վոր խղուր տեղից ձեզ տանջում, չարչարում են և այլն, և այլն: Ահա նման մի շարք պրովոկացիաներ: Այնպես, վոր ընկերնե՛ր, դասակարգային թշնամին ամեն տեղ է. նա և կոլխոզումն է և կոլխոզից դուրս, նա հետևում է մեր բոլոր ձեռնարկումներին ու աշխատանքներին և տանում իր խլուրդային, քայքայիչ աշխատանքները:

ՍԱԹԻԿ.— Պակաս թշնամի չե՛ ընկ. Մուշեղը...

ՄՈՒՇԵՂ.— (Բարկացած). ընկեր նախագա՛հ, խնդրում եմ կարգի հրավիրեք դրան, նա վիրավորում է ինձ...

ՂԱՐԻԲ.— (Մատիտը սեղանին խփելով). ա՛ա՛, թողե՛ք, ընկերնե՛ր: Մաթոս, շարունակիր:

ՄԱԹ.— Ընկերնե՛ր, մենք կարծեք թե կորցրել ենք մեր դասակարգային, հեղափոխական, բայլշևիկյան զգոնությունը: Մենք քնած ենք, իսկ նա, դասակարգային թշնամին, արթուն է: Մենք կուրացել ենք և չենք տեսնում կուլակին: Կուլակն այժմ կերպարանափոխվել է: Կերպարանափոխվելու հետ միասին՝ փոխել է նաև իր պայքարի մեթոդները:

ՁԱՑՆԵՐ.—Շատ ճիշտ է...

ՄԱԹ.— Նա այլև ավաշկարա չի պայքարում կոլխոզի դեմ։ Նա կոլխոզ ուզում է, բայց ինչ-պիսի՞ կոլխոզ։ Այնպիսի կոլխո՛զ, վորտեղ կոմունիստներ չլինեն, վոր կոլխոզը իր պարտականությունները՝ հանդեպ պետության չկատարի։ Նա պահանջում է աշխատրերի համար ավելի վարձատրել։ Կոլխոզի ֆոնդերը հարստացնել, պետական մթերումները չեղանձել և կոլխոզում ունենալ իր դասակարգի մարդկանց, վորպեսզի այդպիսով կոլխոզը հակադրեն պետությանը։

Ընկերնե՛ր, յեթե կուլակությանը, մեր դասակարգային թշնամուն, հաջողվի ստեղծել իր ուզած, իր յերազած կոլխոզը,—կոլխոզ առանց կոմունիստների, նման կոլխոզները վո՛չ թե կլինեն սոցիալիզմի բջիջները գյուղում, այլ հակահեղափոխական և հակախորհրդային բջիջներ Խորհրդային իշխանության դեմ։

Ուզում եմ ասել, ընկերնե՛ր, վոր պետք է լինենք զգուշ, և՛լ ավելի սրենք դասակարգային պայքարը, և՛լ ավելի սուր պահենք մարքս-լենինյան ուսմունքի զենքերը։ Պետք է և՛լ ավելի ուժեղացնենք մեր աշխատանքները կոլխոզնիկների, հարավոր ու միջակ գյուղացիների մեջ։ Պետք է ջարդ ու փշուր անել թշնամու սաբոտաժն ու պրովակացիաները և ապահովել սերմֆոնդի գանձումը։ Ցեսս վերջացրի։

ՍԱԹԻԿ.— Ընկերներ, ընկեր Մաթեվոսը շա տեղին խոսեց և պարզ կերպով դրեց մեր անելիքները՝

պետք է և՛լ ավելի սրենք մեր պայքարն այսոր-
վա կերպարանափոխված, դեմքն ու շորերը փո-
խած կուլակի դեմ: Այստեղ պարզ պետք է
խոսել: Մի՞թե այդ կերպարանափոխված կու-
լակներից չեն, ա՛յ, սրանք՝ Համբո՛ն, Իսրո՛ն,
Հայրո՛ն, իսկ դրանց բարեկամը՝ մեր գյուղ-
խորհուրդի նախագահը՝ Մուշեղը (նրանք
ցնցվում և անհանգիստ շարժումներ են ա-
նում): Սրանք յերեսանց խոսում են կոլխոզի
ամման մասին, իսկ ծածուկ՝ տակից քանդում,
քայքայում նրան: Ցեվ այսոր ուզում են պրա-
վալի յենթարկել մեր բայշևիկյան դարնանա-
ցանը...

ՄՈՒՇԵՂ.— Զայնդ կտրի՛ր, շուն չան քա՛ծ...

ՂԱՐԻԲ.— Հանգի՛ստ. լսեցե՛ք, մի խանգարե՛ք...

ՄՈՒՇԵՂ.— Ինչո՞ւ յե ինձ խառնում կուլակների հետ: Մի՞թե յես հակահեղափոխական եմ: Ցես վաղը կգնամ շրջան և այդ բոլորի մասին կասեմ շրջանային կոմիտեյին...

ՄԱԹ.— Գնա՛, շրջանային կոմիտեն քեզ ել է ճանաչում, մեզ ել...

ՂԱՐԻԲ.— Լռությո՛ւն, ընկերնե՛ր: Ուրիշ խոսողներ չկա՞ն:

ՋԱՑՆԵՐ.— Չկա՛ն: Բավական է, սահմանափակե՛լ:
(Այդ ժամանակ դրսից լսվում է աղմուկ, աղա-
դակ) Ներս է մտնում տրակտորիստը, միան-
գամից դուռը բացելով ու մեծ դղրդյունով:

ՏՐԱԿՏՈՐԻՍՏ.— (Հուզված, այլայլված): Ընկերնե՛ր,
ես գիշեր բոլոր չորս տրակտորներն ել փչաց-

րել են։ Հանել են ամենակարևոր մասերը, վոր առանց դրանց տրակտորները չեն կարող աշխատել։

ՂԱՐԻԲ — (Բոլորը հուզվում, այլայլվում են). *իսկ ո՞վքեր արած կլինեն...*

ՄԱԹ — *Ովքե՞ր, լհարկե, կուլակները* (Համբոն, Իսրոն և Հայրոն ցնցվում են և իրար յերեսի յեն նայում)։ *Տեսնում ե՛ք, ընկերնե՛ր, վոր դասակարգային թշնամին մեզանից ավելի յե ակտիվ, ավելի յե արթուն։*

Նա ավելի տեղին, ժամանակին, ավելի արագ և պայքարում և իր գործը կատարում, քան թե մենք։

ՀԱՅՐՈ — *Բայց ո՞վքեր են համարձակվել այդ բանն անելու։*

ՄԱԹ — *Շուտով կիմանանք, (ընկե՛ր կոլխոզնի՛կ»։*

ՏՐԱԿՏՈՐԻՍՏ — (Գրպանից հանելով մի սև չուգունի ժամացույց)։ *Հա՛, մոռացա ցույց տամ. այս ժամացույցն էլ ընկած եր տրակտորների մոտ...*

(Բոլորը զարմացած հավաքվում են և նայում ժամացույցին)։

ՀԱՅՐՈ — (Համբոյին և Իսրոյին). *ա՛ ա՛. կորա՛նք, կորա՛նք...*

ՀԱՄԲՈ — *Ա՛խ, քո տունը քանդվի՛։ Ի՞նչպես արիր, վոր եդ անտերը մոռացար, այնտեղ թողեցիր...*

ՋԱՅԵԵՐ — *Ո՞ւմը պետք և լինի սա...*

ՄԻ ԿՈԼԽՈԶՆԻԿ — (Ժամացույցն առնելով ձեռքը և

ճայելով) : *Հայրոյի ժամացույցն է...* (Հայրոնն կուչ է գալիս) :

ՁԱՑՆԵՐ .— *Հայրոյի՞...*

ԿՈԼԽՈԶՆԻԿ .— *Այո՛, նրա՛...* (Բոլորը քաթացած, կանգնած են) :

ՂԱՐԻԲ .—(Փիչ պառուզայից հետո). *«Ընկե՛ր» Հայրո՛, նայեցե՛ք. սա ձե՞ր ժամացույցն է...*

ՀԱՑՐՈՆ .— *Վո՛չ...*

ՍԱԹԻԿ .— *Սրիկա՛...*

ՄԱԹ .— *Ընկերնե՛ր, ավելորդ խոսքեր հարկավոր չեն: Դասակարգային պայքար է: Դասակարգերը դեռ չեն վերացել: Մենք պայքարում ենք մեր դասակարգի համար, նրանք էլ իրենց դասակարգի համար: Ո՞վ վոր կհաղթի՝ նրանը կլինի ամեն ինչ: Ցեսս նրանց չեմ մեղադրում. նրանք շատ ակտիվ կերպով, շատ խելացի կերպով կատարել են իրենց դասակարգի պահանջն ու պատվերը: Իսկ մենք շատ անշնորք ենք յեղել, քնել ենք ու կարծել, վոր դասակարգերը վերացել են, կուլակները դառել են Խորհրդային իշխանության հավատարիմ բարեկամները, մտել են կոլխոզ և կոմունիստների հետ գյուղում սոցիալիզմ են կառուցում: Այնպես, վոր, մեղավորը մենք ե՛նք. տրակտորները մե՛նք ենք փչացրել և վոչ թե նրա՛նք...*

ՁԱՑՆԵՐ .—*Շատ ճիշտ է անում ընկեր Մաթեվոսը...*

ՂԱՐԻԲ .—*Ընկերնե՛ր, սրանց դատաստանը պրոլետարական դատարանը կանի: Մեզ մնում է, վոր*

ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

դասակարգային թշնամու այս հարվածներին պատասխանենք ավելի՛ ուժեղ, ավելի՛ ապանիչ: Դա այն է, որ մենք մեր բոլոր ուժերը լարենք և լրիվ, ժամանակից շուտ կատարենք դարնանացանը: Ահա՛, սա կլինի մեր դասակարգային պատասխանը հակահեղափոխական շներին...

ՁԱՑՆԵՐ.— Ճիշտ է. լարենք մեր բոլոր ուժերը և ժամանակին կատարենք դարնանացանը:

ՍԱԹԻԿ.— Ընկերնե՛ր, հարվածայնությամբ և սոցմրցմամբ դուրս գանք սոցիալիստական դաշտերը և ՍՊԻՏԱԿ ՎՈՍԿՈՒ համար պայքարենք բայշևիկորեն. և ցույց տանք մեր դասակարգային թշնամուն, որ կոլխոզները, չքավոր ու միջակ գյուղացիները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ գյուղը տանում են դեպի սոցիալիզմը և ստեղծում են նո՛ր կարգեր, նո՛ր կյանք, նո՛ր կենցաղ:

(Այդ ժամանակ գրասենյակի դուռը բացվում է, ներս են մտնում յերկու չեկիստներ, ժողովականներն ուրախանում են, իսկ Համբոն, Իսրոն և Հայրոն՝ սարսափած՝ ավելի յեն կծկվում, կուչ գալիս):

Ա. ՉԵԿԻՍՏ.— Ո՞վքեր են Համբոն, Իսրոն, Մուշեղը և Հայրոն:

ՁԱՑՆԵՐ.—Մուշեղն ե՞լ...

ՍԱԹԻԿ.— (Մատով ցույց տալով). սրա՛նք են...

Բ. ՉԵԿԻՍՏ.— Գնա՛նք: Առաջ անցե՛ք (տանում են):

ՄԱԹ.— Պրոլետարիատի սուր աչքը տեսավ նրանց: Պրոլետարիատի հզոր ձեռքը վերցրեց նրանց...

ՂԱՐԻԲ.—Սոցիալիզմի բոլոր թշնամիները վաղ, թե ուշ՝ պետք է պատժվեն և վոչնչանան...

ՍԱԹԻԿ.— Կոլխոզի թշնամիները թող մեռնե՛ն...

ԲՈԼՈՐԸ ՄԻԱՍԻՆ.—Կեցցե՛ Խորհրդային իշխանությունը, կեցցե՛ Կոմկուսը, կեցցե՛ բայշևիկյան գարնանացանը...

(ՎԱՐԱԳՈՒՑԸ)

Տեխն. խմբագիր՝ Դ. Զենյան

Պետհրատի տպարան Սրբագրեց՝ Հ. ՍԱՌԻԿՅԱՆ

Գլավլիտ 8085 (բ) Պատվեր 600 Հրատ. 2513 Տիրաժ 3000

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0045505

Գինը 50 կ.

(124.)

A I/8500